Կարգապահական գործ թիվ ԿԳ-22005

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի հունիսի 17-ի թիվ 21-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/11-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մարինե Ֆարմանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Ռուբեն Հակոբյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Էլյա Սարգսյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Աբրահամյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 490), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Էլյա Սարգսյանը (այսուհետ նաև՝ Դիմող) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ իրեն զրկել են Մեղրի քաղաքում իր ժառանգական տնից: Հաշվի առնելով նշվածը, 2021 թվականի օգոստոսի 21-ին Դիմողը պայմանագիր է կնքել փաստաբան Մարիամ Աբրահամյանի հետ, պարզելու համար, թե ինչպես է վաճառվել ժառանգական տունը, և ինչպես են իր փոխարեն ստորագրել Մեղրի քաղաքի նոտարական գրասենյակում:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանը ստացել է փաստաթղթեր, բայց դրանք մինչ այժմ չի ներկայացրել, չի պատասխանում իր հեռախոսազանգերին և իր կարծիքով համագործակցում է հակառակ կողմի հետ:

Վերոգրյալի հիման վրա, Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 27.01.2022թ. թիվ 22-Ա/ԿԳ-22005 որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝**

նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

03.02.2022թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամալյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն այն մասին, որ 2021 թվականի օգոստոսի 21-ին Դիմողը պայմանագիր է կնքել փաստաբան Մարիամ Աբրահամյանի հետ, որ նա պարզի համար, թե Մեղրի քաղաքում գտնվող իր պապական տունը ինչպես է վաճառվել, և ինչպես են իր փոխարեն ստորագրել նոտարական գրասենյակում:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանը ստացել է փաստաթղթերը, սակայն իրեն չի ներկայացրել, չի պատասխանում իր հեռախոսազանգերին և իր կարծիքով համագործակցում է հակառակ կողմի հետ:

Խորհրդի նիստում Դիմողի ըստ էության պնդել է դիմումով արտահայտված դիրքորոշումը:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Մարիամ Աբրահամյանի կողմից Դիմումի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն, որի համաձայն՝ վերջին անգամ նա պատասխանել է դիմողի հեռախոսազանգերին 2021 թվականի դեկտեմբերի 20-ին՝ մեկնելուց մեկ օր առաջ, ինչպես նաև հավելել է, որ 2021 թվականի դեկտեմբերի 21-ից մինչև 2022 թվականի հունվարի 8-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Փաստաբանը նշել է, որ Էլյա Սարգսյանը դիմել է իրեն իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով և այդ նպատակով նրանց միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Փաստաբանը հայտնել է, որ պատվիրատուի (դիմողի) պնդմամբ նրան զրկել են ժառանգությունից, բայց նա իր մոտ չի ունեցել ոչ մի փաստաթուղթ, որը կհիմնավորեր այդ փաստը: Այդ իսկ պատճառով կնքվել է պայմանագիր, համաձայն, որի ՀՀ Կադաստրի կոմիտեից և ժառանգության բացման վայրի նոտարից պետք է ձեռք բերվեր համապատասխան փաստաթղթեր, և տրամադրվեին Էլյա Սարգսյանին:

Դիմողի կողմից ճիշտ չի տրամադրվել ժառանգվող գույքի բնակելի տան հասցեն, ինչի պատճառով կատարված հարցումների արդյունքում անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք չեն բերվել: Մեղրիի համայնքապետարանից հասցեն ճշտվելուց հոտ կրկին կատարվել են հարցումներ, ինչի արդյունքում ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացվել է կադաստրային գործի պատճեններն ամբողջությամբ, որոնք այս պահին կարող եմ հանձնել դիմողին, ինչպես նաև

Էլյա Սարգսյանի որդուն մինչ այդ առաջարկել է տրամադրել էլեկտրոնային հասցե ձեռք բերված փաստաթղթերը էլեկտրոնային կարգով տրամադրելու համար:

Փաստաբանը նշել է նաև, որ Նոտարական տարածքից դեռևս փաստաթղթերը չեն ստացվել, քանի որ ժառանգության բացման վայրի նոտարը ճշտված հասցեով հարցումը ուղարկելուց հետո գտնվել է արձակուրդում, որից հետո մասնակցել է վերապատրաստման դասընթացների և մինչև 2022 թվականի հունվարի 14-ը գտնվելու է արձակուրդում:

Հակառակ կողմի հետ համագործակցության վերաբերյալ դիմողի պնդման կապակցությամբ փաստաբանը նշել է, որ ծառայությունը պետք է մատուցվեր ընդամենը փաստաթղթեր հավաքելու և դրան Էլյա Սարգսյանին տրամադրելու շրջանակներում, իսկ հակառակ կողմի հետ համագործակցությունը տրամաբանությունից դուրս է:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 04.04.2022թ-ին կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերը առարկություն չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 04.04.2022թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.06.2022թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 3.10.3 ենթակետի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմողի և Փաստաբանի միջև 2021 թվականի օգոստոսի 11-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): *Սույն փաստը հաստատվում է պայմանագրի պատճենով:*
2. Պայմանագրի 2.1 կետի համաձայն. «Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում կատարողը՝

- Կազմակերպում է Պատվիրատուի ժառանգության հետ կապված փաստաթղթերի հավաքագրման գործընթացը.
- Դատական ներկայացուցչությունն իրականացնում է փաստաբան Մարիամ Աբրահամյանը:

3. Պայմանագրի 4.1 կետի համաձայն. «Սույ պայմանագրի 2.1 կետով սահմանված ծառայության գինը կազմում է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որը վճարվել է Դիմողի կողմից: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրի պատճենով:*

4. 04.02.2022թ. Դիմողը ստացել է նոտար՝ Ն. Պողոսյանի 20.01.2022թ. գրության պատճենը, ինչպես նաև կադաստրային գործի էլեկտրոնային կրիչը: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական գործ նախապատրաստող անձ փաստաբան Կարեն Քամալյանի կողմից վերցրած բացատրությամբ:*

5. Փաստաբանը վերջին անգամ պատասխանել է դիմողի հեռախոսազանգերին 2021 թվականի դեկտեմբերի 20-ին: *Սույն փաստը հաստատվում է 11.01.2022թ. Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությամբ:*

6. Դիմողի զանգերին չպատասխանելը Փաստաբանը հիմնավորում է իր վրա բողոք գրելու հանգամանքով: *Սույն փաստը հաստատվում է առկա նամակագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մարիամ Աբրահամյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 20.10.2006թ. և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում Փաստաբանի նկատմամբ հարուցվել է 1 կարգապահական վարույթ, որով վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Հիմնական կարգապահական տույժը մարվել է, իսկ լրացուցիչ տույժ մարված չէ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական*

պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի նշված իրավադրույթների խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ:

Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն դեպքում Խորհրդի համար պարզման է ենթակա հետևյալ իրավական հարցադրումը՝ արդյո՞ք փաստաբան Մ. Աբրահամյանը վստահորդին բարեխղճորեն և ժամանակին է ցուցաբերել իրավաբանական օգնություն՝ հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելով, ինչպես նաև պատասխանելով վստահորդին հետաքրքրող հարցերին:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում պարզվել է, որ Դիմողի և Փաստաբանի միջև 2021 թվականի օգոստոսի 11-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 2.1 կետի համաձայն՝ Կողմերի

համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում կատարողը՝ Կազմակերպում է Պատվիրատուի ժառանգության հետ կապված փաստաթղթերի հավաքագրման գործընթացը:

Փաստաբանը 31.01.2022թ. թիվ Ե-02 գրությամբ դիմողին է հասցեագրել է նոտար՝ Ն. Պողոսյանի 20.01.2022թ. գրության պատճենը, ինչպես նաև կադաստրային գործի էլեկտրոնային կրիչը, որը Դիմողի պնդմամբ ինքը ստացել է 04.02.2022թ.

Նոտար Ն. Պողոսյանի 20.01.2022թ. գրության պատճենից հետևում է, որ Փաստաբանը դիմել է ՀՀ արդարադատության նախարարության Սյունիքի մարզի նոտար Նարեկ Պողոսյանին՝ տեղեկատվություն ստանալու դիմումով 08.12.2021 թվականին: Այսինքն, պայմանագիրը կնքելու պահից գրեթե չորս ամիս հետո, իսկ կադաստրային գործը ստացել է 31.01.2022թ., այսինքն, հինգ ամիս քսան օր հետո:

Ամբողջ վերը նշվածը հիմք ընդունելով, միանշանակ է, որ փաստաբանը, Ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, խախտել է փաստաբանի համար սահմանված բարեխղճության կանոնը, այն է՝ պատշաճ կարգով ցույց չի տվել իրավաբանական օգնություն, ժամանակին չի կատարել նյութերի ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար չի իրականացրել գործով անհրաժեշտ գործողությունները, ինչպես նաև վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու արագությունը չի համապատասխանում «հանձնարարությունը արագ կատարելու» էթիկայի չափանիշին:

Ինչ վերաբերում է հանձնարարության կատարման ընթացքի մասին վստահորդին չտեղեկացնելու և վստահորդին հետաքրքրող հարցերին չպատասխանելու վարքագծին, հարկ է նշել, որ Փաստաբանը ընդունել է այն հանգամանքը, որ Դիմողի հեռախոսազանգերին վերջին անգամ պատասխանել է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին, իսկ դրանից հետո հեռախոսազանգերին չի պատասխանել, քանի որ Դիմողը բողոք է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ, ինչը անընդունելի է:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանը թույլ է տվել Կանոնագրքի 3.6.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) տուգանք
5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և նույն հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին (արտոնագիր՝ թիվ 490) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.6.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանի (արտոնագիր՝ թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարինե Ֆարմանյան

17 հունիսի 2022թ.
թիվ ԿԳ/11-Ա
ք. Երևան